



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Խորհրդի որոշմամբ

Առ 21/10/2016թ.

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ Խորհրդի նախագահ՝

_____ Գ. Զարարյան
ստորագրություն

**«ՌԵՍՈ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ
2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	2
2.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	3
3.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ.....	5
4.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ.....	5
5.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՍՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ.....	7
6.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ).....	10
7.ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	10
8.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ԴՐԱ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ.....	11
9.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.....	13
10.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	13
11.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	15
12.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	18
13.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	19
14.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	22
15.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	22

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Ապահովագրված անձի մշտական բնակության վայր հանդիսացող երկրից դուրս (այսուհետ՝ **Արտասահման**) ճանապարհորդության մեջ գտնվող անձանց աջակցության ապահովագրության պայմանները (այսուհետ՝ **Պայմաններ**) կազմված են ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 1.2. Սույն Պայմանների հիման վրա, «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն կնքում է Արտասահման մեկնող անձանց աջակցության ապահովագրության պայմանագրեր: Սույն Պայմանները հանդիսանում են ճանապարհորդության մեջ գտնվող անձանց աջակցության ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը:
- 1.3. Ապահովագրության պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կարող է ներառել այլ դրույթներ: Ապահովագրության պայմանագրերի դրույթները գերակայում են սույն Պայմանների դրույթներին:
- 1.4. Ապահովագրության պայմանագրի կողմեր են համարվում Վկայագրի համապատասխան դաշտերում նշված Ապահովագրողը, Ապահովադիրը և Ապահովագրված անձը: Պայմանների և Վկայագրի դրույթներն ու պահանջները պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադիրի/Ապահովագրված անձի համար: Այն դեպքում, երբ Պայմանագրով Ապահովագրված անձ է հանդիսանում Ապահովադիրից տարբերվող այլ անձ, ապա Ապահովադիրը պարտավոր է վերջինիս տեղեկացնել Պայմաններով նախատեսված

պարտավորությունների անվերապահ կատարման մասին: Հակառակ դեպքում այդ պարտավորությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրող՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ:

Ապահովադիր՝ գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն Ապահովագրողի հետ կնքել է ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

Ապահովագրված անձ՝ Պայմանագրում նշված անձ, որի հետ կապված Ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Պայմանագրում Ապահովագրված անձ նշված չլինելու դեպքում Ապահովադիրը հանդիսանում է Ապահովագրված անձ: Որպես Ապահովագրված անձ կարող են հանդես գալ Արտասահման ուղևորության մեկնող գործունակ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: Որպես Ապահովագրված անձ չի կարող հանդես գալ այն պետության քաղաքացին կամ կացության թույլտվություն ունեցող անձը, որի տարածքում կատարվում է ճանապարհորդությունը: Ապահովագրված անձը հանդիսանում է Շահառու, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

Վկայագիր՝ Սույն Պայմանների հիման վրա Ապահովագրողի և Ապահովադիրի միջև կնքված և ստորագրված անվանական փաստաթուղթ, որը հաստատում է Ապահովագրության Պայմանագրի կնքումը ի օգուտ Ապահովագրված անձի:

Ապահովագրական պատահար՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում, և որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Ապահովագրողի՝ Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում իրականացնելու պարտավորությունը:

Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա գումար:

Ապահովագրական ծրագիր՝ Պայմանագրի մեջ ներառված ապահովագրական ռիսկեր/ծածկույթներ, Ապահովագրված անձին դրանց շրջանակներում իրականացված բժշկական և այլ ծառայությունների հետ կապված ծախսերը, որոնց համար Ապահովագրողն իրականացնում է Ապահովագրական հատուցում:

Ապահովագրական գումար՝ Պայմանագրով որոշված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված կարգով վճարել Ապահովագրական հատուցում:

Պայմանական միավոր՝ Պայմանագրում նշված Ապահովագրական գումարի արտարժույթի մեկ միավոր:

Ապահովագրավճար՝ ապահովագրության Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադիրի կողմից Ապահովագրողին վճարվելիք գումար:

Ապահովագրության տարածք՝ Պայմանագրում նշված երկիր կամ երկրներ, որոնց տարածքում Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը կրում է Ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունը:

Սպասարկող ընկերություն՝ Ապահովագրողի հետ պայմանագիր ունեցող կազմակերպություն, որը շուրջօրյա, շաբաթական 7 օր, իրականացնում է Ապահովագրված անձանց մշտական բնակության վայրից դուրս գտնվելու ժամանակ սույն Պայմաններով նախատեսված բժշկական և այլ ծառայություններ: Սպասարկող ընկերության կոնտակտային տվյալները նշվում են Վկայագրում:

Հարազատներ՝ հայր, մայր, երեխա, օրինական ամուսին, քույր, եղբայր:

Դժբախտ պատահար՝ Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած տարբեր արտաքին գործոնների (ֆիզիկական, քիմիական, տեխնիկական և այլն) միանշանակ նույնականացվող հանկարծակի և կարճաժամկետ ներգործությունը, որի հետևանքով նա ստացել է մարմնական վնասվածքներ կամ մահացել, այդ թվում՝ բնության տարերային աղետներ, պայթյուն, այրվածք, ցրտահարություն, էլեկտրական հոսանքի ազդեցություն, կենդանիների հարձակում, Ապահովագրված անձի կամ նրա վրա որևէ իրի վայր ընկնելը, հանկարծակի խեղդամահություն, ջրահեղձում, ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով ստացված վնասվածքներ և այլն: Դժբախտ պատահար չեն համարվում սուր, քրոնիկ և ժառանգական հիվանդությունների բոլոր տեսակները և դրանց հետևանքները, այդ թվում՝ սրտամկանի ինֆարկտ, ուղեղի կաթված, անաֆիլակտիկ շոկ, ինֆեկցիոն հիվանդություններ և այլն:

Հանկարծակի հիվանդություն՝ հիվանդություն կամ առողջական վիճակ, որն առաջացել է հանկարծակի և պահանջում է հրատապ (մի քանի ժամվա ընթացքում) բժշկական օգնություն, որի չտրամադրումը կարող է հանգեցնել Ապահովագրված անձի մահվան, աշխատունակության մշտական կորստի և/կամ առողջության անդառնալի այլ փոփոխությունների:

Առավել վտանգավոր գործողություններ՝ Ապահովագրված անձի բոլոր այն կանխամտածված գործողությունները, որոնք ուղղակիորեն բերում են Ապահովագրական ռիսկերի ավելացմանը, այդ թվում՝ անվտանգության կանոններ չպահպանելը, ավկոհոլային ազդեցության տակ տրանսպորտային միջոց վարելը և այլն:

Էքստրեմալ սպորտաձևեր՝ սաֆարի, դայվինգ, ռաֆտինգ, ձիավարություն, քարանձավագնացություն, լեռնագնացություն, դահուկային սպորտ, թռչող սարքերով թռչելը, պարաշյուտիզմ, ռոուփ-ջամփինգ, պարկուր, սերֆինգ, մաունթբայք, սքեյթբորդինգ, սնուտբորդինգ, կվարդացիկլով կամ սկուտերով երթևեկելը, սպորտի և ակտիվ հանգստի վտանգավոր այլ ձևերը, որոնք կարող են մեծացնել Ապահովագրված անձի տրավմատիզմի ռիսկը:

Սուբրոգացիա՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին կամ Ապահովագրված անձին պատճառված վնասից բխող վնաս պատճառած անձի նկատմամբ նրանց պահանջի իրավունքի փոխանցումը Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Պայմաններով Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը, որոնք կապված են Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված՝ Ապահովագրված անձի կրած բժշկական, բժշկատրանսպորտային և այլ ծախսերի վճարման հետ՝ Պայմանագրում նշված երկրի (երկրների) տարածքում գտնվելու ընթացքում:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

4.1. Սույն Պայմաններով Ապահովագրական պատահարներ են համարվում՝ Ապահովագրված անձի Հանկարծակի հիվանդությունը, Դժբախտ պատահարը, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած մահը, այն պայմանով, որ վերոհիշյալ իրադարձությունները տեղի են ունեցել Պայմանագրում նշված Ապահովագրության տարածքում Ապահովագրված անձի գտնվելու ժամանակ՝ Պայմանագրի գործողության ընթացքում: Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը Սպասարկող ընկերության միջոցով կազմակերպում և վճարում է սույն Պայմաններով և Պայմանագրով նախատեսված շտապ բժշկական օգնության, բժշկատրանսպորտային և այլ ծախսերը, կամ հատուցում է վերոնշյալ ծախսերը Ապահովագրված անձին՝ Սպասարկման ընկերության կամ Ապահովագրողի հետ դրանք նախապես համաձայնացնելու դեպքում:

4.2. Պայմանագրով կարող է նախատեսվել Ապահովագրական հատուցում՝ կապված Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած հետևյալ ծախսերի հետ՝

4.2.1. Բժշկական ծախսեր՝

4.2.1.1. Ամբուլատոր (արտահիվանդանոցային) բժշկական օգնություն՝ ընդհանուր պրակտիկայի բժշկի կամ նեղ մասնագետի խորհրդատվություն, ապահովագրական դեպքի բնույթից բխող անհրաժեշտ ախտորոշիչ հետազոտություններ, ներարկումներ, անզգայացում, վերքերի առաջնային վիրաբուժական մշակում, վիրակապություններ և այլն: Բժշկի կանչի հետ կապված ծախսերը հատուցվում են միայն այն դեպքում, եթե Ապահովագրված անձի առողջական վիճակը թույլ չի տալիս ինքնուրույն այցելել բժշկին:

4.2.1.2. Ստացիոնար (հիվանդանոցային) բժշկական օգնություն՝ Ապահովագրված անձի հրատապ հոսպիտալացում, հիվանդասենյակում գտնվելը, վերակենդանացման միջոցառումներ, հրատապ վիրահատությունների իրականացումը (այն դեպքերում, երբ վիրահատությունը չի կարող հետաձգվել մինչև Ապահովագրված անձի հնարավոր ամենավաղ վերադարձի ամսաթիվը): Օստենոինթեզի անհրաժեշտության դեպքում, մետաղական կոնստրուկցիաների ձեռքբերման ծախսերը հատուցվում են 1,000 Պայմանական միավորի չափով:

4.2.1.3. Դեղամիջոցներ, բժշկական պարագաներ (ներարկիչներ, կաթիլային ներարկումների համակարգեր)՝ մինչ մշտական բնակության երկիր վերադառնալու համար անհրաժեշտ քանակով:

- 4.2.1.4. Վիրակապական պարագաներ, անշարժացնող միջոցներ, հենակների կամ հաշմանդամային անվասայլակի վարձակալում՝ 100 Պայմանական միավորի չափով:
- 4.2.1.5. Շտապ աստամնաբուժական օգնության հետ կապված ծախսեր (ատամի հեռացում, թարախակույտի բացում, անզգայացում)՝ սուր աստամնացավի առաջացման կամ Դժբախտ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների դեպքերում՝ 250 Պայմանական միավորի չափով:
- 4.2.2. Բժշկական էվակուացում և բժշկական հայրենադարձում՝
- 4.2.2.1. Ապահովագրված անձի տեղափոխում համապատասխան տրանսպորտային միջոցներով դեպքի վայրից դեպի տրամադրվող բժշկական օգնության տեսակներով և ծավալով համապատասխանող, տվյալ երկրում գտնվող մոտակա հիվանդանոցներից մեկը:
- 4.2.2.2. Ապահովագրված անձի հայրենադարձում՝ վերջինիս մշտական բնակության վայրին միջազգային հաղորդակցում ունեցող ամենամոտ օդանավակայան՝ կյանքին անմիջական սպառնացող վտանգի վերացումից հետո, անհրաժեշտության դեպքում համապատասխան բժշկական ուղեկցմամբ, եթե այդ տեղափոխման համար չկան բժշկական հակացուցումներ: Սույն կետով նախատեսված տեղափոխումը կարող է իրականացնել միայն Սպասարկող ընկերության միջոցով:
- 4.2.3. Հետաձգված հայրենադարձում՝ Ապահովագրական դեպքի հետևանքով՝ եթե Ապահովագրված անձը Ապահովագրական դեպքի հետևանքով ժամանակին չի վերադարձել իր մշտական բնակության երկիրը, Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի վերադարձի հետ կապված ծախսերը՝ վերջինիս մշտական բնակության վայրին միջազգային հաղորդակցում ունեցող ամենամոտ օդանավակայան՝ վերադարձի չօգտագործված տոմսը էկոնոմ կարգի նոր տոմսով փոխարինելու արդյունքում առաջացած գնային տարբերության չափով: Ապահովագրված անձը պետք է կատարի իրենից կախված բոլոր գործողությունները՝ իր վերադարձի չօգտագործված տոմսը նախապես հանձնելու համար, հակառակ դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի նվազեցնել սույն կետով նախատեսված հատուցումը՝ չօգտագործված տոմսի արժեքի չափով:
- 4.2.4. Հետմահու հայրենադարձում՝ Ապահովագրված անձի դիակի հայրենադարձում մշտական բնակության վայրին միջազգային հաղորդակցում ունեցող ամենամոտ օդանավակայան՝ միջազգային տեղափոխությանը համապատասխանող դագաղի տրամադրմամբ: Հայրենադարձման հետ կապված բոլոր գործողություններն իրականացվում են միայն Սպասարկող ընկերության միջոցով:
- 4.2.5. Այլ տրանսպորտային ծախսեր՝
- 4.2.5.1. Երրորդ անձի այցը արտակարգ իրավիճակի դեպքում՝ եթե Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի հիվանդանոցում գտնվելու

ժամանակը գերազանցում է 7 (յոթ) օր և առկա է երրորդ անձի կողմից խնամքի անհրաժեշտությունը, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի Հարազատներից մեկի երկկողմանի ուղղությամբ էկոնոմ կարգի տոմսերի ծախսը: Հարազատի արտերկրում գտնվելու ծախսերն Ապահովագրողը չի հոգում:

4.2.5.2. Վաղաժամկետ վերադարձ՝ Ապահովագրված անձի մշտական բնակության երկրում գտնվող Հարազատի հանկարծամահության դեպքում Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի վաղաժամկետ վերադարձի հետ կապված ծախսերը՝ վերադարձի չօգտագործված տոմսը էկոնոմ կարգի նոր տոմսով փոխարինելու արդյունքում առաջացած գնային տարբերության մասով:

4.2.5.3. Անչափահաս երեխաների հայրենադարձում՝ եթե Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած Ապահովագրական պատահարի հետևանքով իր հետ ճանապարհորդող անչափահաս երեխաները մնացել են առանց խնամակալի, Ապահովագրողը ապահովում է նրանց մշտական բնակության վայր վաղաժամկետ վերադարձը էկոնոմ կարգի տոմսով, ներառյալ Հարազատներից մեկի ուղեկցման հետ կապված ծախսերը:

4.2.6. Կապ Սպասարկող ընկերության հետ՝ Ապահովագրական դեպքի շրջանակներում Սպասարկող ընկերության հետ հեռախոսով կապ հաստատելու ծախսերը՝ մինչև 100 Պայմանական միավորի չափով: Անհրաժեշտության դեպքում Սպասարկող Ընկերությունը հեռախոսի կամ կապի այլ միջոցներով տեղեկացնում է Ապահովագրված անձի մշտական երկրում գտնվող հարազատներին Ապահովագրական դեպքի վերաբերյալ:

4.2.7. Իրավաբանական աջակցում՝ անհրաժեշտության առաջացման դեպքում Սպասարկող ընկերությունը աջակցում է Ապահովագրված անձին իրավաբանական ծառայությունների կազմակերպման հարցում՝ իրավաբանական ծառայությունների համար Ապահովագրված անձի կողմից ինքնուրույն վճարելու պայմանով: Ընդ որում, Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերը ենթակա չեն հատուցման, և Ապահովագրողը չի կրում որևէ պատասխանատվություն մատուցված ծառայությունների որակի մասով:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՍՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

5.1. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ցանկացած ծախս, եթե պարզվի, որ Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը Ապահովագրողին հայտնել է ապակողմնորոշիչ տեղեկություններ՝ Ապահովագրված անձանց առողջական վիճակի կամ ուղևորության նպատակի վերաբերյալ:

5.2. Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերը հատուցման ենթակա չեն, եթե նա պատահար տեղի ունենալուց հետո անհապաղ չի տեղեկացրել այդ մասին Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին և նախապես չի համաձայնեցրել իր կողմից կատարված ծախսերը Սպասարկող ընկերության կամ Ապահովագրողի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը պատահարի հետևանքով հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է

դարձրել Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին նախապես տեղեկացնել պատահարի մասին: Ապահովադիրը և/կամ Ապահովագրված անձը կրում են Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված տեղեկացնելու պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը պարտավոր են անհապաղ հայտնել Ապահովագրողին տեղի ունեցած Ապահովագրական պատահարի մասին:

- 5.3. Ապահովագրության Պայմաններով որպես Ապահովագրական պատահար չեն դիտվում և չեն հատուցվում այն դեպքերի հետ կապված ծախսերը, որոնք հետևանք են
 - 5.3.1. ահաբեկչական ակտի, ժողովրդական հուզումների, ռազմական գործողությունների և միջոցառումների,
 - 5.3.2. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության,
 - 5.3.3. տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների,
 - 5.3.4. Ապահովագրված անձի կողմից հակաիրավական և/կամ հանցավոր գործողություններ կատարելու,
 - 5.3.5. Ապահովագրված անձի ակտիվային, թմրանյութային, տոքսիկ կամ այլ տեսակի հարբեցման,
 - 5.3.6. Ապահովագրված անձի ինքնասպանության, ինքնասպանության փորձի, կանխամտածված անդամախեղության,
 - 5.3.7. Ապահովագրված անձի կողմից Առավել վտանգավոր գործողությունների իրականացման, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արվում են մարդու կյանքը փրկելու նպատակով,
 - 5.3.8. եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, որպես Ապահովագրական պատահար չեն դիտվում և չեն հատուցվում այն ծախսերը, որոնք առաջացել են Էքստրեմալ սպորտաձևերով, պրոֆեսիոնալ սպորտով (մարզանքների և մրցումների ժամանակ) կամ մասնագիտական գործողություններով զբաղվելու, Ապահովագրված անձի ցանկացած երկրի ռազմական ուժերում կամ կազմավորումներում ներգրավման (այդ թվում՝ ռազմական ուսումներին մասնակցության) հետևանքով:
- 5.4. Ապահովագրական Պայմաններով որպես Ապահովագրական պատահար չեն դիտվում և չեն հատուցվում հետևյալ հիվանդությունների և առողջական վիճակների, դրանց բարդությունների և մահվան ելքի հետ կապված ծախսերը՝
 - 5.4.1. բժշկական օգնություն ստանալու նպատակով ուղևորության դեպքում՝ Ապահովագրված անձի մոտ առկա հիվանդությունները, դրանց բուժման ընթացքում առաջացած բոլոր բարդությունները,
 - 5.4.2. բոլոր այն հիվանդություններն ու վիճակները, որոնց հիմքերն ի հայտ են եկել մինչև Պայմանագրի գործողության սկիզբը, անկախ այն հանգամանքից, իրականացվել է բուժումը, թե ոչ,
 - 5.4.3. եթե տվյալ ճանապարհորդությունը նախաձեռնվել է՝ հաշվի չառնելով ճանապարհորդության համար առկա բժշկական հակացուցումները,
 - 5.4.4. բարորակ և չարորակ նորագոյացություններ, արյունաբանական հիվանդություններ,
 - 5.4.5. հենաշարժիչ ապարատի դիստրոֆիկ և այլ դեգեներատիվ փոփոխություններ (օստեոխոնդրոզ, օստեոարթրոզ, օստեոպորոզ, պաթոլոգիկ կոտրվածքներ և այլն), բացառությամբ սուր ցավային համախտանիշի դեմ ուղղված հրատապ գործողությունների,

- 5.4.6. առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, ուրոգենիտալ ինֆեկցիաներ, սնկային ախտահարումներ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, վիրաուսային հեպատիտներ B, C և D, տուբերկուլյոզ,
- 5.4.7. արևային այրվածքներ և արևահարություններ, ծծմբային խցաններ,
- 5.4.8. բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական հիվանդություններ, անոթների անևրիզմաներ և մալֆորմացիաներ,
- 5.4.9. հոգեկան հիվանդություններ և խանգարումներ, պսիխոզներ, ներոզներ, սահմանային վիճակներ,
- 5.4.10. նորմալ և պաթոլոգիկ հղիության վարում և ծննդոգնություն,
- 5.4.11. հղիության վաղաժամկետ դադարեցում, բացառությամբ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Դժբախտ պատահարներով պայմանավորված դեպքերի:

- 5.5. Սույն Պայմաններով հատուցման ենթակա չեն հետևյալ ծախսերը՝
 - 5.5.1. խորհրդատվություններ և հետազոտություններ (այդ թվում՝ հետազոտությունների նպատակով հոսպիտալացում), որոնց արդյունքում չի ախտորոշվել Ապահովագրական պատահար հանդիսացող որևէ հիվանդություն կամ վիճակ, կամ որոնք կապված չեն Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Հանկարծակի հիվանդության կամ Դժբախտ պատահարի հետ,
 - 5.5.2. վերահսկման նպատակով իրականացվող բոլոր այն բժշկական ծառայությունները, որոնց անցկացումը հնարավոր է հետաձգել մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության վայր վերադառնալը, այդ թվում՝ պլանային կրկնակի խորհրդատվությունները և բժշկական հետազոտությունները,
 - 5.5.3. ցանկացած տեսակի պրոթեզավորում, կոսմետիկ/պլաստիկ վիրահատություններ և միջամտություններ, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում,
 - 5.5.4. վերականգնողական բուժում, ֆիզիոթերապիա, կազդուրողական միջոցառումներ, սանատոր-կուրորտային բուժում, կանխարգելիչ միջոցառումներ (այդ թվում՝ պատվաստումներ), այլընտրանքային բժշկության մեթոդներ,
 - 5.5.5. անգիոգրաֆիկ հետազոտություններ, ներանոթային միջամտություններ, սրտի և անոթների վիրահատություններ, այդ թվում՝ անգիոպլաստիկա և շունտավորում,
 - 5.5.6. ատամների պլոմբավորում և էնդոդոնտիկ բուժում, ատամնաբուժական օրթոպեդիա և օրթոդոնտիա,
 - 5.5.7. առավել հարմարավետ հիվանդասենյակի և լրացուցիչ հարմարավետությունների (հեռուստացույց, օդափոխիչ սարք և այլն) տրամադրում,
 - 5.5.8. բոլոր այն ծախսերը, որոնց մասով բացակայում է բժշկական ցուցում,
 - 5.5.9. այն ծախսերը, որոնք առաջացել են բժշկի նշանակումները Ապահովագրված անձի կողմից չկատարելու հետևանքով,
 - 5.5.10. բոլոր այն ծախսերը, որոնք կատարվել են Ապահովագրության տարածքից դուրս, այդ թվում՝ Ապահովագրված անձի իր մշտական բնակության վայրը վերադառնալուց հետո,
 - 5.5.11. ցանկացած էվակուացում կամ հայրենադարձում, որը կազմակերպված չի եղել Սպասարկող ընկերության կողմից, կամ կատարվել է առանց Սպասարկող ընկերության և/կամ Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցման,
 - 5.5.12. այն ծախսերը, որոնց մասով հատուցումը իրականացվում է ուղևորների փոխադրողի պատասխանատվության և/կամ ապահովագրության այլ տեսակներով,
 - 5.5.13. բարոյական վնասը:

**6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՀՄԱՆԱԶԱՓԵՐ, ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
(ՖՐԱՆՇԻԶԱ)**

- 6.1. Ապահովագրական գումար՝ Պայմանագրով նախատեսված Ապահովագրական հատուցման առավելագույն չափ: Ընդ որում, յուրաքանչյուր Ապահովագրական հատուցումից հետո Ապահովագրական գումարը նվազում է տրամադրված հատուցման գումարի չափով:
- 6.2. Պայմանագրով որոշ Ապահովագրական ռիսկերի համար կարող են նախատեսվել տրամադրվող հատուցման առավելագույն սահմանաչափեր, ինչպես նաև կիրառվել տարիքային սահմանափակումներ:
- 6.3. Եթե բժշկական և այլ ծառայությունների հետ կապված ծախսերը գերազանցում են Պայմանագրով նախատեսված Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը), ապա ծախսերի գերազանցող մասը ինքնուրույն է վճարվում Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից:
- 6.4. Ապահովագրության Պայմանագրով կարող է սահմանվել Չհատուցվող գումար (Ֆրանշիզա), որի տեսակը և չափը սահմանվում են ապահովագրության Վկայագրում: Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողը ազատվում է այն վնասների հատուցման պարտականությունից, որոնց չափը չի գերազանցում չհատուցվող գումարի սահմանաչափը, սակայն այն գերազանցելու դեպքում վճարում է ամբողջ վնասի չափով: Ոչ պայմանական չհատուցվող գումարի դեպքում կատարվում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի մասով հատուցվող գումարի նվազեցում՝ ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով: Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, նշված չհատուցվող գումարը հանդիսանում է ոչ պայմանական:
- 6.5. Բոլոր դեպքերում ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել Վկայագրով նախատեսված հատուցման սահմանաչափերը, իսկ բոլոր հատուցումների հանրագումարը չի կարող գերազանցել Պայմանագրում նշված ընդհանուր Ապահովագրական գումարը:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1. Ապահովագրավճար՝ Պայմանագրում նշված գումար, որը ենթակա է վճարման Ապահովադրի կողմից Ապահովագրողին (նրա լիազորված ներկայացուցչին)՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 7.2. Ապահովագրավճարը սահմանվում է Ապահովագրողի կողմից ըստ Պայմանագրի կնքման պահին գործող սակագների, հաշվի առնելով Ապահովադրի կողմից ընտրած ապահովագրական ծածկույթը և Պայմանագրի գործողության ժամկետը:
- 7.3. Ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ՝ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը, ապահովագրության ամբողջ ժամանակահատվածի համար, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.4. Եթե Ապահովադրի կողմից ապահովագրավճարը չի վճարվել Պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում, ապա Պայմանագիրը համարվում է ուժի մեջ չմտած և չի առաջացնում որևէ հետևանք կամ պարտավորություն Կողմերի համար:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ԴՐԱ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Պայմանագիրը կնքվում է գրավոր տեսքով՝ Ապահովագրողի կողմից Ապահովադրին տրամադրելով ապահովագրության Վկայագիրը սույն Պայմանների հետ:
- 8.2. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է նախքան Ապահովագրված անձի Ապահովագրության տարածք մուտք գործելը: Ճանապարհորդության սկզբի ամսաթվից հետո կնքված կամ ավարտի ամսաթվից հետո երկարացված Պայմանագրերը համարվում են անվավեր:
- 8.3. Ապահովագրության Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը գրավոր կամ բանավոր դիմում է Ապահովագրողին (նրա լիազոր ներկայացուցչին, գործակալին) և հայտնում է ապահովագրության Պայմանագիր կնքելու իր մտադրության մասին՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը և տվյալները՝
- 8.3.1. ֆիզիկական անձի դեպքում՝ Ապահովադրի անձնագիրը, գրանցման և մշտական բնակության հասցեները, հեռախոսահամարը,
- 8.3.2. իրավաբանական անձի դեպքում՝ Ապահովադրի անվանումը, պետ. ռեգիստրի գրանցման համարը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական և փաստացի գործունեության հասցեները, հեռախոսը և բանկային վավերապայմանները,
- 8.3.3. Ապահովագրված անձի (անձանց) անձանգիրը, գրանցման և մշտական բնակության հասցեները, հեռախոսահամարը,
- 8.3.4. ճանապարհորդության մեջ գտնվելու ծրագրավորված ժամանակահատվածի սկիզբը և ավարտը,
- 8.3.5. այն երկիրը կամ երկրները, որոնց տարածքում գործելու է Ապահովագրության Պայմանագիրը,
- 8.3.6. ուղևորության նպատակը,
- 8.3.7. տեղեկություններ Ապահովագրված անձանց առողջական վիճակի մասին,
- 8.3.8. մասնագիտությունը և ճանապարհորդության ընթացքում իրականացվելիք գործունեության բնույթը, եթե ուղևորության նպատակն աշխատանքն է,
- 8.3.9. սպորտաձևը կամ սպորտային մրցումների տեսակը, որոնց մասով ենթադրվում է Ապահովագրված անձի մասնակցությունը, ինչպես նաև ակտիվ հանգստի տեսակները, որոնցով Ապահովագրված անձը պատրաստվում է զբաղվել,
- 8.3.10. նախընտրելի Ապահովագրական ծրագիրը, Ապահովագրական գումարի չափը,
- 8.3.11. տեղեկություն այն երկրների մասին, որտեղ Ապահովագրված անձը հանդիսանում է քաղաքացի կամ ունի կացության իրավունք:
- 8.4. Պայմանագիրը կնքելուց առաջ, ապահովագրական ռիսկը գնահատելու և Ապահովագրավճարի չափը որոշելու նպատակով, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից՝ Ապահովագրվող անձանց մասով լրացնել հատուկ Բժշկական

հարցաթերթիկ՝ Ապահովագրողի կողմից սահմանված կարգով: Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին՝ իրեն հայտնի բոլոր հանգամանքները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի գնահատման վրա: Ապահովագրվող անձի կողմից Բժշկական հարցաթերթիկը լրացնելուց հրաժարվելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովադիրին Պայմանագրի կնքումը կամ կիրառել Ապահովագրական ռիսկերի մասով որոշակի սահմանափակումներ:

- 8.5. Ապահովագրողն իրավունք ունի որոշ տարիքային խմբերին պատկանող, ինչպես նաև I, II կամ III կարգի հաշմանդամություն ունեցող կամ բուժում ստանալու նպատակով արտասահման մեկնող անձանց ապահովագրելիս պահանջել Ապահովադրից՝ ներկայացնել տվյալ անձանց մասով բժշկական փաստաթղթեր իրենց առողջական վիճակի և ճանապարհորդության համար հակացուցումների բացակայության մասին, սահմանել տրամադրվող Ապահովագրական ծածկույթում լրացուցիչ բացառություններ և/կամ Ապահովագրավճարի նկատմամբ բարձրացնող գործակիցներ:
- 8.6. Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը/Ապահովագրված անձը տալիս է իր գրավոր համաձայնությունը՝ Ապահովագրողին և/կամ Սպասարկող ընկերությանը, ինչպես նաև նրանց ներկայացուցիչներին իր Առողջական վիճակի, իրեն տրամադրվող բժշկական օգնության ցանկացած տեղեկության հասանելիության, բժշկական փաստաթղթերին ծանոթանալու, դրանց կրկնօրինակները պահանջելու վերաբերյալ՝ ազատելով բուժող բժշկին և Բժշկական հաստատությունը բժշկական գաղտնիքի պահպանման պարտականությունից:
- 8.7. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիրը կնքելիս, Ապահովադիրը պատասխանատվություն է կրում՝ Ապահովագրված անձանց անհատական տվյալների մշակման համար իրենց կողմից համաձայնությունը ստանալու: Անհատական տվյալների մշակման տակ հասկացվում է՝ ֆիզիկական անձանց անհատական տվյալների հավաքագրում, համակարգում, կուտակում, դեպերսոնալիզացիա, արգելափակում, ոչնչացում, ինչպես նաև այլ գործողությունների իրականացում՝ վիճակագրական, ինչպես նաև Ապահովագրական ռիսկերի վերլուծման նպատակով: Ապահովագրված անձի կողմից իր անհատական տվյալների մշակման համար համաձայնությունը ետ կանչելու դեպքում, Պայմանագրի գործողությունը սույն անձի մասով դադարում է այն պահից, երբ Ապահովագրողին հայտնի է դարձել այդ հանգամանքը: Այդ դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչնչացնել այդ անհատական տվյալները՝ ՀՀ օրենսդրության սահմանված ժամկետներում և կարգով: Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից անհատական տվյալների մշակման համար համաձայնությունը ետ կանչելը և Ապահովագրության Պայմանագրից հրաժարվելը ճանաչվում է Ապահովագրողի կողմից որպես Ապահովադրի/Ապահովագրված անձի կամքի դրսևորումը, ինչի պատճառով Ապահովագրողին այդ անձանց մասով վճարված գումարը ենթակա չէ վերադարձման կամ նոր անձանց ապահովագրելու ժամանակ վերահաշվառման:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 9.1. Երկիրը կամ երկրները, որտեղ գործում է ապահովագրությունը, նշվում են Վկայագրում: Ապահովագրությունը կարող է գործել աշխարհի բոլոր երկրներում, բացառությամբ՝
- ա) այն պետությունների, որոնց տարածքում իրականացվում են ռազմական գործողություններ կամ հայտարարված է ռազմական իրավիճակ,
 - բ) այն պետությունների, որոնց նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի տնտեսական և/կամ ռազմական սանկցիաները,
 - գ) այն տարածքների, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել են համաճարակների օջախներ,
 - դ) այն պետությունների, որտեղ Ապահովագրված անձն ունի քաղաքացիություն (այդ թվում՝ երկրորդ քաղաքացիություն) կամ կացության իրավունք:
- 9.2. Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է Ապահովագրված անձի ճանապարհորդության մեջ գտնվելու ժամանակահատվածի համար, սակայն ոչ ավել, քան 1 (մեկ) տարի ժամկետով:
- 9.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում նախատեսված են Ապահովագրված անձի բազմաթիվ ուղևորություններ, կամ Պայմանագրի գործողության օրերի քանակը քիչ է դրա գործողության ժամկետից, ապա Պայմանագիրը գործում է միայն ապահովագրված օրերի քանակի չափով:
- 9.4. Ապահովագրված անձի յուրաքանչյուր ուղևորության ժամանակ, Պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի քանակը նվազեցվում է Ապահովագրության տարածքում գտնվելու օրերի քանակով: Ապահովագրողը Ապահովագրված անձի նկատմամբ չի կրում որևէ պարտականություն՝ Պայմանագրով սահմանված օրերի քանակի սպառվելու պահից:
- 9.5. Ապահովագրության Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովագրված անձի կողմից Պայմանագրի գործունեության տարածքի սահմանն անցնելու պահից, սակայն Պայմանագրում նշված վերջինիս գործողության սկզբի ամսաթվից ոչ շուտ, և գործում է մինչև Պայմանագրում նշված դրա գործողության ավարտի ամսաթիվը կամ ապահովագրված օրերի քանակի սպառվելը:
- 9.6. Եթե Ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի մոտենալու պահին Ապահովագրված անձի ճանապարհորդությունից վերադարձը հնարավոր չէ Ապահովագրական պատահարով պայմանավորված հոսպիտալացման պատճառով, որը հաստատվում է համապատասխան բժշկական արձանագրությամբ՝ Ապահովագրողը կատարում է Պայմանագրի և սույն Պայմանների 4.2.1 կետում նախատեսված և տվյալ պատահարով պայմանավորված իր պարտականությունները մինչև անհետաձգելի առողջական վիճակի հետ կապված բժշկական գործողությունների ավարտը:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱԲԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 10.1. Ապահովագրության Պայմանագրի գործողությունը դադարում է, և Ապահովագրված անձը գրկվում է դրանով նախատեսված ծածկույթից օգտվելու իրավունքից՝

- 10.1.1. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու կամ ապահովագրության օրերը լրանալու դեպքում (նշված ավարտի ամսաթվի ժամը 23.59-ին), բայց իր մշտական բնակության վայր հանդիսացող երկրի սահմանը հատելու պահից ոչ ուշ,
- 10.1.2. Դատարանի կողմից Պայմանագիրը անվավեր ճանաչելու դեպքում,
- 10.1.3. Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
- 10.1.4. Պայմանագրով, սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 10.2. Ապահովագրության Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝
- 10.2.1. Ապահովադրի նախաձեռնությամբ, եթե նախատեսված ճանապարհորդությունը չի կայանում: Պայմանների սույն կետի իրագործման համար պարտադիր է, որ Ապահովադիրը՝
- Այդ մասին տեղեկացնի Ապահովագրողին Պայմանագրի գործողությունը սկսելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ,
 - Ապահովագրողին հետ վերադարձնի Պայմանագրի բնօրինակը,
 - Ապահովագրողին գրավոր ձևով հիմնավորի ուղևորությունից հրաժարվելու պատճառները, կցելով համապատասխան փաստաթղթերը:
- 10.2.2. կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
- 10.3. Եթե ապահովագրության Պայմանագիրը վաղաժամկետ է լուծվում Ապահովադրի նախաձեռնությամբ մինչև դրա գործողության սկիզբը և պահպանվում են 10.2.1 կետով նախատեսված բոլոր պայմանները, ապա վճարված գումարը վերադարձվում է Ապահովադրին ամբողջությամբ, այլ դեպքերում Ապահովագրավճարի վերադարձ տեղի չի ունենում:
- 10.4. Ֆիզիկական անձ հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության պայմանագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ հաճախորդի կողմից ապահովագրության պայմանագիրը լուծելու մասին ապահովագրական ընկերությանը ծանուցելու օրվան հաջորդող օրվանից, և Ապահովագրողը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին համամասնական կարգով վճարել պայմանագրի գործողության մնացած ժամկետի համար ապահովագրավճարները: Ապահովագրության պայմանագրի հետ կապված որևէ այլ վճար հաճախորդից պահանջվել չի կարող, բացառությամբ ապահովագրության պայմանագրի հետ կապված կատարած փաստացի ծախսերի: Ընդ որում, հաճախորդը ծանուցման հետ պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել վկայագրի բնօրինակը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված Ապահովագրողի տրամադրած այլ փաստաթղթերը: Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում՝
- 1) ապահովագրության Պայմանագրի ժամկետը չի գերազանցում մեկ ամիսը, և (կամ) պայմանագրով նախատեսված ապահովագրությունը գործում է մինչև մեկ ամիս ժամկետով,

2) պարտադիր ապահովագրության դեպքում,

3) ապահովագրության Պայմանագրի կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ հաճախորդը դիմել է Ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

Մտածելու ժամանակի ընթացքում ապահովագրության պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքից չօգտվելը չի բացառում ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը:

Ֆիզիկական անձ հաճախորդը իրավունք չունի պահանջելու ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում՝

ա) մտածելու ժամանակի ընթացքում պատահարի մասին նա չի ծանուցել ապահովագրական ընկերությանը,

բ) եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը մինչև մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է ապահովագրական ընկերությանը պայմանագիրը լուծելու մասին:

10.5. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու արդյունքում սույն Պայմաններով նախատեսված է Ապահովագրավճարի վերադարձը ապա այն իրականացվում է 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ Ապահովադրից/Ապահովագրված անձից գրավոր դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում, Սպասարկող ընկերությունը աջակցում է Ապահովագրված անձին՝ Պայմանագրով նախատեսված բժշկական և այլ տեսակների օգնության տրամադրման մեջ, տեղեկացնում է իրեն այդ օգնությունը ստանալու կարգի մասին, տալիս է խորհուրդներ՝ հետագա գործողությունների վերաբերյալ:

11.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և/կամ Ապահովագրված անձը պարտավոր է՝

11.2.1. Նախքան բժշկական օգնության դիմելը՝ անհապաղ կապ հաստատել Սպասարկող ընկերության (իսկ անհնարինության դեպքում՝ անմիջապես Ապահովագրողի հետ), զանգահարելով Ապահովագրության Վկայագրում կամ դրա հավելվածներում նշված շուրջօրյա հեռախոսահամարներով, և հայտնել հետևյալ տեղեկությունները՝

- Ապահովագրված անձի անուն, ազգանուն (լատինատառ),
- Ապահովագրողի անվանումը («ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ),
- Ապահովագրության Վկայագրի համարը,
- Վկայագրի գործողության ժամկետը,
- Նկարագրել խնդիրը, դրա առաջացման հանգամանքները, առողջական գանգատները, պահանջվող բժշկական կամ այլ օգնության բնույթը,
- Գտնվելու վայրը և հետադարձ կապի հեռախոսահամարը,

- Պատասխանել Սպասարկող ընկերության աշխատակցի բոլոր այլ հարցերին:
- 11.2.2. խստորեն հետևել Սպասարկող ընկերության աշխատակցի ցուցումներին, համաձայնեցնել իր հետ բոլոր գործողությունները,
 - 11.2.3. Սպասարկման կենտրոնի կողմից կազմակերպված բժշկական ծառայություններից օգտվելիս՝ Բժշկական հաստատության անձնակազմին ներկայացնել ապահովագրության Պայմանագր, ինչպես նաև անձնագիրը կամ դրա փոխարինող փաստաթուղթը,
 - 11.2.4. Չտրամադրել անձնագիրը և այլ փաստաթղթերը որպես գրավ, չտրամադրել պարտավորագրեր և չվերցնել իր վրա վճարման պարտականությունները՝ առանց Սպասարկող ընկերության հետ համաձայնեցման,
 - 11.2.5. Կատարել վճարում անմիջապես բժշկական հաստատությանը չհատուցվող գումարի չափով, եթե այդպիսին նախատեսված է ապահովագրության Պայմանագրով,
 - 11.2.6. հետևել բժշկի նշանակումներին և բժշկական հաստատության կողմից սահմանված կանոնակարգին,
 - 11.2.7. տալ համաձայնություն՝ մշտական բնակության վայր հանդիսացող երկիր վերադարձալու համար, եթե Բժշկական հաստատությունից տրամադրված փաստաթղթերի հիման վրա կայացած Սպասարկող ընկերության բժշկի կարծիքով, նման տեղափոխումը հնարավոր է: Այս համաձայնությունը տալուց հրաժարվելու դեպքում Ապահովագրված անձը զրկվում է հետագա բուժման հետ կապված բոլոր ծախսերի հատուցումից Ապահովագրողի կողմից՝ բժշկական հայրենադաձման առաջարկման ամսաթվից սկսած:
 - 11.2.8. Սպասարկող ընկերության կողմից ստացված հանձնարարության համաձայն՝ ստորագրել փաստաթղթեր, որոնք փաստում են Ապահովագրողին և Սպասարկող ընկերությանն իր առողջական վիճակի, ցուցաբերված բժշկական օգնության մասին բոլոր տեղեկությունների հասանելիության, իրենց կողմից բժշկական փաստաթղթերին ծանոթանալու և դրանց պատճենները պահանջելու իր համաձայնությունը, ազատելով բուժող բժշկին բժշկական գաղտնիքի պահմանման պարտականությունից: Համաձայնության ձևը տրամադրվում է բժշկական հաստատության կամ Սպասարկող ընկերության կողմից,
 - 11.2.9. որոշ դեպքերում, երբ հնարավոր չէ կազմակերպել ծառայությունները առանց տեղում վճարումը իրականացնելու կամ Սպասարկող ընկերության հետ համագործակցող բժշկական հաստատություններում տվյալ ծառայությունները հնարավոր չէ իրականացնել, Ապահովագրված անձը պետք է ինքնուրույն վճարի Սպասարկող ընկերության կողմից կազմակերպված կամ այդ ընկերության հետ համաձայնեցված ծախսերը:
 - 11.2.10. եթե ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետը գերազանցում է ապահովագրված օրերի քանակը, ապա Ապահովագրված անձը պարտավոր է Ապահովագրողին փաստաթղթորեն ապացուցել, որ բժշկական օգնության և/կամ բժշկական հաստատություն տեղափոխման համար դիմելու պահին ապահովագրության ժամկետն ավարտված չի եղել՝ ներկայացնելով անձնագիրը, որտեղ

սահմանապահ մարմինների կողմից կատարվել են սահմանը հատելու վերաբերյալ համապատասխան նշումներ,

- 11.3. Սույն Պայմանների 11.2.1 ենթակետով սահմանված պահանջներից սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ Ապահովագրված անձը գտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրական պատահարի մասին տեղեկացնել Սպասարկող ընկերությանը և/կամ Ապահովագրողին: Ապահովադիրը և/կամ Ապահովագրված անձը կրում են Սպասարկող ընկերության կամ Ապահովագրողին նրանց կողմից պատահարի մասին տեղեկացնելու մինչև բժշկական կամ այլ օգնության դիմելը անհնարինությունն ապացուցող փաստաթղթերի ներկայացման պարտականությունը:
- 11.4. Սույն Պայմանների 11.3 կետով նախատեսված՝ Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին տեղեկացնելու պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը պարտավոր են առաջին իսկ հնարավորության դեպքում կապվել Սպասարկող ընկերության կամ Ապահովագրողի հետ՝ չկատարելով երրորդ անձանց կողմից առաջարկվող կամ արդեն իսկ մատուցված ծառայությունների համար որևէ վճարում առանց Սպասարկող ընկերության կամ Ապահովագրողի համաձայնության,
- 11.5. Ապահովագրված անձը կարող է բժշկական ծառայություններ ստանալու համար դիմել իր նախընտրած բժշկական հաստատությանը՝ պայմանով, որ այդ մասին նախօրոք տեղեկացրել է Սպասարկող ընկերությանը և ստացել վերջինիս համաձայնությունը: Սպասարկող ընկերությունը տալիս է իր համաձայնությունը, եթե Ապահովագրված անձի նախընտրած բժշկական հաստատության կողմից մատուցվող ծառայությունները համապատասխանում են բուժման իրականացման ընդունված միջազգային չափանիշներին, հաստատությունն ունի համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիա (թույլտվություն), և բժշկական ծառայությունների համար գանձումները ողջամիտ են և համապատասխանում են գտնվելու տարածաշրջանում սովորաբար ընդունված վճարների չափին: Այս դեպքում Ապահովագրված անձն ինքնուրույն է վճարում մատուցված ծառայությունների դիմաց:
- 11.6. Ապահովագրված անձի բժշկական էվակուացում կամ բժշկական հայրենադարձում ապահովելու համար Սպասարկող ընկերության բժիշկը պետք է ազատ մուտք ունենա Ապահովագրված անձի մոտ և նրա հիվանդության պատմությանը՝ տեղափոխման հնարավորությունը և տեղափոխման համար անհրաժեշտ պայմանները որոշելու համար: Եթե վերջինիս ամբողջական իրականացման համար Ապահովագրված անձը և նրան ուղեկցողները չեն ստեղծում անհրաժեշտ պայմանները, ապա տվյալ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել սույն դեպքի հետ կապված ծախսերի հատուցումից: Դրանից հետո Սպասարկող ընկերությունը բուժող բժշկի հետ համաձայնեցնելու արդյունքում նշանակում է տեղափոխման ամսաթիվն ու միջոցը:
- 11.7. Ապահովագրողը որևէ պատասխանատվություն չի կրում ցուցաբերված բժշկական օգնության որակի, ինչպես նաև փոխադրողի կողմից չվացուցակը չպահպանելու մասով:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 12.1. Ապահովագրողն իրականացնում է Պայմանագրով նախատեսված Ապահովագրական ռիսկերի շրջանակներում փաստացի կատարված ծախսերի հատուցում՝
- ա) Սպասարկող ընկերությանը՝ վերջինիս կողմից կազմակերպված բժշկական և տրանսպորտային ծառայությունների, ինչպես նաև սպասարկման ծախսերի դիմաց,
 - բ) անմիջապես Ապահովագրված անձին (շահառուին)՝ բացառապես այն դեպքերում, երբ վերոնշյալ ծախսերը իրականացվել են Ապահովագրված անձի կամ իր ներկայացուցչի կողմից՝ նախապես համաձայնեցնելով դրանք Սպասարկող ընկերության և/կամ Ապահովագրողի հետ:
- 12.2. Իր կողմից կատարված ծախսերի դիմաց հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձը ճանապարհորդությունից վերադառնալուց հետո Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
- 1) Ապահովագրողի կողմից սահմանված ձևով լրացրած հայտային դիմում, որի մեջ պետք է նշվեն պատահարի հանգամանքները, տվյալ պատահարի շրջանակներում Ապահովագրված անձի գործողությունները կոորդինացնող Սպասարկող ընկերությունը, այդ ընկերությանը առաջին հեռախոսազանգը կատարելու օրը և ժամը,
 - 2) Ապահովագրական դեպքը տեղի ունենալուց հետո սույն Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին չտեղեկացնելու դեպքում՝ հիմնավոր պատճառաբանությամբ գրավոր դիմում և հիմնավորող փաստաթղթեր,
 - 3) Ապահովագրության Պայմանագիրը,
 - 4) բժշկական փաստաթղթերը և դրանց հայերեն թարգմանությունները (հաստատված թարգմանչական գրասենյակի կնիքով), որոնք պարունակում են տեղեկատվություն բժշկական եզրակացության, Ապահովագրված անձի դիմելու ամսաթվի և առողջական վիճակի, բժշկական օգնության և տևողության վերաբերյալ (մեկ պատահարով մինչև 500 Պայմանական միավոր կազմող ծախսը ներկայացնելու դեպքում անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված փաստաթղթերի համար թարգմանությունը չի պահանջվում),
 - 5) բժշկի կողմից ախտորոշիչ հետազոտություններ անցնելու նպատակով տրված ուղեգրի բնօրինակը և տրամադրված ծառայությունների գները՝ յուրաքանչյուր ծառայության համար առանձին նշված գնով և ամսաթվերով,
 - 6) բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսերը և ձեռքբերված դեղամիջոցների դիմաց վճարումը հավաստող համապատասխան ֆինանսական փաստաթուղթերը (ՀԴՄ կտրոն և այլն), որոնք կապված են տվյալ հիվանդության հետ,
 - 7) մատուցված ծառայությունների համար բժշկական հաստատության կողմից տրամադրված հաշիվ-ապրանքագրի բնօրինակը, որը պետք է ներառի Ապահովագրված անձի անունը, ազգանունը, բժշկական եզրակացությունը, բուժօգնության համար դիմելու ամսաթիվը, բուժման տևողությունը, տրամադրված ծառայությունների ցանկը՝ դասակարգված ըստ գնի և տևողության, ծառայությունների ընդհանուր արժեքը, ինչպես նաև դրանց վճարումը հաստատող ֆինանսական փաստաթղթերը:
 - 8) Պայմանագրով նախատեսված այլ ծառայությունների համար կատարած վճարումները հավաստող ֆինանսական փաստաթղթեր,

- 9) Դժբախտ պատահարների հետևանքով առաջացած դեպքերում՝ իրավասու մարմնի կողմից տրված եզրակացություն՝ դեպքի տեղի ունենալու հանգամանքների և ժամանակի, ստացված մարմնական վնասվածքների բնույթի և այլն:
- 12.3. Ապահովագրված անձի կատարած ծախսերի հատուցման նպատակով Ապահովագրողն ընդունում է միայն վճարված հաշիվները:
- 12.4. Ապահովագրողն իրավասու է անցկացնել տրամադրված փաստաթղթերի իսկության ստուգում, հարցումներ կատարել տվյալ ապահովագրական պատահարից իրազեկ կազմակերպություններից, ինչպես նաև իրականացնել Ապահովագրված անձի բժշկական հետազոտություն Ապահովագրողի բժշկի օգնությամբ:
- 12.5. Հատուցման դիմումը պետք է ներկայացվի Ապահովագրողին ոչ ուշ, քան ճանապարհորդությունից վերադառնալուց 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետից ուշ ներկայացված ծախսերը ենթակա չեն հատուցման:
- 12.6. Ներկայացված փաստաթղթերի բնօրինակները ապահովագրական հատուցման վճարումից հետո վերադարձման ենթակա չեն:

13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 13.1. Ապահովադիրը/Ապահովագրված անձն իրավունք ունի.
- 13.1.1. Պայմանագրի և սույն Պայմանների համաձայն ստանալ ապահովագրական հատուցումները, բժշկական և այլ ծառայությունները,
- 13.1.2. Պայմանագրի կորստի դեպքում ստանալ Պայմանագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը:
- 13.2. Ապահովադիրը/Ապահովագրված անձը պարտավոր է.
- 13.2.1. վճարել ապահովագրավճարներն Ապահովագրողին՝ պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,
- 13.2.2. տեղեկացնել Ապահովագրողին իր օգտին կնքված և մշտական բնակության վայրից դուրս բժշկական և այլ ծախսերի հատուցում նախատեսող այլ գործող ապահովագրական պայմանագրերի մասին,
- 13.2.3. Պայմանագրի կնքման ժամանակ հայտնել Ապահովագրողին ապահովագրական ռիսկերի գնահատման համար էական նշանակություն ունեցող և իրեն հայտնի հանգամանքներ: Էական նշանակություն ունեցող են համարվում այն հանգամանքները, որոնց մասին նախապես իմանալու դեպքում Ապահովագրողը կհրաժարվեր տվյալ ռիսկերը ապահովագրելուց կամ կկիրառեր ապահովագրավճարը բարձրացնող գործակիցներ, այդ թվում՝ Ապահովագրված անձանց առողջական վիճակը և հաշմանդամության կարգի առկայությունը, ուղևորության նպատակը, գործունեությունը, սպորտով զբաղվելը, ակտիվ հանգիստը և այլն,
- 13.2.4. Պայմանագրի գործողության ընթացքում անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին՝ Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքներում իրեն հայտնի դարձած բոլոր այն էական փոփոխությունների մասին, որոնք կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա,

- 13.2.5. ծանոթանալ և ներկայացնել Ապահովագրված անձանց Պայմանագրի և սույն Պայմանների բոլոր էական դրույթները,
- 13.2.6. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովագրական պատահարների առաջացումը կանխելու կամ առաջանալու դեպքում հետևանքները մեղմացնելու համար,
- 13.2.7. ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի տեղի ունենալու դեպքում նախքան բուժ. հաստատության դիմելը անհապաղ, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորության առաջացումից հետո անմիջապես, պատահարի մասին տեղեկացնել Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին, և հետևել Սպասարկող ընկերության կամ Ապահովագրողի կողմից ստացված հրահանգներին:
- 13.2.8. ձեռքի տակ ունենալ Վկայագրի բնօրինակը՝ մշտական բնակության վայրից դուրս գալու դեպքում, այդ թվում՝ Սպասարկող ընկերություն կամ բժշկական օգնություն ստանալու համար բժշկական հաստատություն դիմելիս,
- 13.2.9. հոգալ փաստաթղթերի (ապահովագրության Պայմանագրի, բժշկական և այլ փաստաթղթերի, ծառայությունների վճարման հաշիվների և կտրոնների) պահպանման մասին, չփոխանցել դրանք երրորդ անձանց, այդ թվում՝ վերջիններիս կողմից բժշկական օգնություն ստանալու նպատակով,
- 13.2.10. իր վրա չվերցնել վճարումների վերաբերյալ որևէ պարտականություններ, բացառությամբ Սպասարկող ընկերության հետ նախապես համաձայնեցված վճարումների,
- 13.2.11. տրամադրել իր համաձայնությունը՝ Սպասարկող ընկերության և Ապահովագրողի կողմից Ապահովագրական դեպքի հետ կապված իր անձնական տվյալների (այդ թվում՝ բոլոր բժշկական տեղեկությունների և փաստաթղթերի) հասանելիության վերաբերյալ,
- 13.2.12. պահանջել և պահպանել Ապահովագրական դեպքի հետ կապված և Ապահովագրական հատուցման մասին որոշումը կայացնելու համար անհրաժեշտ բոլոր բժշկական և ֆինանսական փաստաթղթերը, և սույն Պայմաններով նախատեսված ժամկետում փոխանցել դրանք Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հաստատված ձևով հատուցման դիմումը ներկայացնելիս,
- 13.2.13. ապահովագրողի պահանջով ներկայացնել Ապահովագրական պատահարի հետ կապակցված լրացուցիչ փաստաթղթեր,

13.3. Ապահովագրողն իրավունք ունի.

- 13.3.1. պահանջել Ապահովագրից տրամադրել Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ հավաստի տեղեկություններ և ստուգել դրանց արժանահավատությունը՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող ցանկացած միջոցներով,
- 13.3.2. փոխել Սպասարկող ընկերությունը կամ ներգրավել մեկ այլ ընկերություն՝ Ապահովագրական դեպքի կարգավորման ընթացքում,
- 13.3.3. ինքնուրույն կամ Սպասարկող ընկերության միջոցով ճշտել Ապահովագրական դեպքի հանգամանքները և պատճառները, ուղարկել համապատասխան կազմակերպություններին հարցումներ՝ Ապահովագրական պատահարի առաջացման

պատճառների և հանգամանքների վերաբերյալ, հետաձգելով ապահովագրական հատուցումը,

- 13.3.4. պահանջել Ապահովագրված անձից՝ կատարել Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները, այդ թվում՝ Ապահովադրի պարտականությունները: Սույն պահանջը չկատարելու կամ ուշացումով կատարելու հետևանքների համար պատասխանատու է հանդիսանում ինչպես Ապահովադիրը, այնպես էլ Ապահովագրված անձը,
- 13.3.5. Չհատուցել կամ մասնակի հատուցել Սպասարկող ընկերության կողմից չկազմակերպված և/կամ վերջինիս հետ նախապես չհամաձայնեցված ծառայությունների հետ կապված ծախսերը,
- 13.3.6. Որոշել բժշկական և այլ ծառայությունների մատուցման կարգը և ծավալը՝ կախված Ապահովագրված անձի գտնվելու երկրում գործող օրենսդրությունից և ընդունված բժշկական օգնության ցուցաբերման կարգից,
- 13.3.7. Նվազեցնել հատուցվող գումարի չափը, եթե Հանկարծակի հիվանդության կամ ստացված մարմնական վնասվածքի ընթացքը բարդանում է մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելն առկա որևէ հիվանդության պատճառով,
- 13.3.8. հետաձգել Ապահովագրական հատուցումը մինչև Ապահովագրված անձը կամ իր ներկայացուցիչը չներկայացնեն հատուցման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը,
- 13.3.9. ռիսկի մեծացումը ենթադրող հանգամանքների մասին ծանուցվելիս պահանջել գործող ապահովագրության պայմանների փոփոխում կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում՝ ռիսկի մեծացմանը համաչափ: Այն դեպքում, եթե Ապահովադիրը առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխության կամ Ապահովագրավճարի ավելացման դեմ, Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը՝ առանց Ապահովագրավճարի վերադարձման,
- 13.3.10. միակողմանի լուծել Պայմանագիրը՝ ապահովագրավճարը Պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում չվճարելու դեպքում,
- 13.3.11. մերժել ապահովագրական հատուցումը և միակողմանի լուծել Պայմանագիրը Ապահովագրված անձի մասով առանց ապահովագրավճարի վերադարձման, եթե ապացուցվի, որ հատուցում ստանալու նպատակով տվյալ անձի կամ իր ներկայացուցչի կողմից ներկայացրել են կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

13.4. Ապահովագրողը պարտավոր է.

- 13.4.1. ծանոթացնել Ապահովադիրին Ապահովագրության պայմաններին,
- 13.4.2. հսկել Ապահովագրված անձին մատուցվող և Պայմանագրով նախատեսված բժշկական և այլ ծառայությունների ծավալը և մատուցման ժամկետների պահպանումը,
- 13.4.3. չբացահայտել տեղեկություններ Ապահովադրի և Ապահովագրված անձանց մասին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

- 13.4.4. բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ Ապահովագրական հատուցմն իրականացնելու կամ այն մերժելու մասին: Մերժման դեպքում գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրված անձին՝ նշելով մերժման պատճառները,
- 13.4.5. վճարել ապահովագրական հատուցում համապատասխան որոշումն ընդունելուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում,
- 13.4.6. տեղեկացնել Ապահովադրին բանկային վավերապայմանների, իրավաբանական և փաստացի գտնվելու վայրի, կոնտակտային հեռախոսի և հեռաֆաքսի համարների փոփոխության մասին:

14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 14.1. Ապահովագրության Պայմանագրի՝ սույն Պայմաններին չհամապատասխանելու դեպքում նախապատվությունը տրվում է ապահովագրության Պայմանագրին:
- 14.2. Պայմանագրից ծագող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ փոխադարձ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 14.3. Պայմանագրով և սույն Պայմաններով չսահմանված բոլոր այլ դրույթները կարգավորվում են ըստ ՀՀ գործող օրենսդրության:
- 14.4. Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ լիարժեք կատարելու հետևանքով առաջացած ծախսերը ենթակա են հատուցման մեղավոր կողմից երկրորդ կողմին ըստ ՀՀ գործող օրենսդրության:

15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 15.1. Սույն Պայմանների հիման վրա Ապահովագրական ծրագրերը հաստատվում են համաձայն «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի գործող ներքին իրավական փաստաթղթերի: